

ղեցւոյ և Մզգի նախնի սրբազան Հարց
և բարենախանձ ու պանծալի քաջարանց
շաւիղներէ՝ ՚ի կարուստ անուան Հայ
Մզգութեան :

Պատենն նամակի Արդուինոյ Եպիսկոպոսին
Հայ Հռովմեականաց.

Վերապատիւ Տեառնդ խնդալ .

Օ Հռովմէական սրբազան զհրաման ՚ի
գործ դնել կամեցեալ մեր, ձեռնամուխ
լինիմք փանաքի գրութեամբս, իրազեկ
առնել Վերապատիւ Տեառնդ զսիրա-
տենչ հրաւերն Սրբազան Վրահանայա-
պետին մերոյ Պիոսի իններորդի, ՚ի տիե-
զերական յընդհանուր ժողովն. զորս
ունի գումարել ՚ի Հռովմ յամի հազար
ութ հարիւր վաթսուն իններորդի. և
յինն յամետան դեկտեմբերի, որպէս և
ծանուցանէ յիւր հրաւիրական տետ-
րակն :

Մըդ նոյն ինքն ծայրագոյն Վրահա-
նայապետիս կամելով տալ զհրաւերն և
միանգամայն սփռել զհրաւիրական տետ-
րակն ընդ ամենայն քրիստոնեայ եպիս-
կոպոսունս և առաջնորդս, մեզ պատ-
ուէր հրամանի տուեալ է ՚ի դիմաց իւ-
րոյ Սէհափառութեան՝ զի ընծայես-
ցուք իւրաքանչիւր Եպիսկոպոսաց և
Մաջնորդաց, և իշխանազուն աշխար-
հականաց անգամ, որք գտանին մերոյ
թեմական վիճակին, թէ համազգի իցեն
և թէ օտարազգի : Մհա և մեք փութամք
զնորայն պատուէր կատարել, առ Վե-
րապատութիւնդ առաքելով զՍորին

Ծայրագոյն Վրահանայապետին զթուղթն
հրաւիրանաց՝ զիտալերէնն և զնորին հա-
րազատ զթարգմանութիւն ՚ի հայ բար-
բառ :

**Սպասելով դարձի պատասխանին մնամք
սիրով Վերապատութեանդ**

խ. ծ. Ա. Վ. Հարսնեան Եպիսկ.
29 յունի. 1869 Արդվնոյ եւ այլն
Եպիսկոպոսարանէս :

Պատենն պատասխանոյ Առաջնորդին Կա-
րուց առ Քերապայծառն Արդվնոյ .

Վերապայծառ Տեառնդ խնդալ ՚ի Տէր .

Մյս օրերուս մեր անուան ուղղուած
հասցէիւ նամակ մը առինք, և ինչպէս տե-
ղէ մը եկած նամակը տէր եղողը կը բա-
նայ, այնպէս ալ մենք առանց ուսկից կամ
ինչ ըլլալը գիտնալու բացինք. բայց երբ
տեսանք որ Ձեր Վերապայծառութեան
ստորագրեալ յատուկ մէկ նամակաւը
Հռօմի ժողովին հրաւիրանաց հայերէն և
իտալերէն տետրակներն էին, և Հայե-
րէնին վրայի մակագիրը ՚Մա ամենայն
Եպիսկոպոսունս արևելածէս եկեղե-
ցեաց որք Մաքելապետական Մթոռոյն
հետ հաղորդակցութիւն չունին, էր
գրուած. այս օրինակ հրաւեր մը շար-
ժեց մեր զարմանքը երիւք աւելի. զի
նախ Եպիսկոպոսացն պատկառելի Մատի-
ճանին վիճակաւորելոց ըլլալուն մեզ վե-
րաբերութիւն չունէր : Արկորդ հա-
ղորդակցութիւն չունենալիս յայտնի

եղած ատեն՝ հակառակ մակագրի տետրակներ մեզ կը հաղորդուէր թերևս Մուսքելոյն խօսքին հաստատութիւն է որ կըսէ «Վանդի ղինչ բաժին կայ և այլն»։ Եւ երրորդ՝ մինչդեռ բոլոր աշխարհի յայտնեալ ճշմարտութիւն մ'է, որ չեմ կարծեր թէ Հռօմ անգիտացած ըլլայ թէ մեք Հայաստանեայցս Մուսքելական և ուղղափառ ս. Վկեղեցւոյ պաշտօնեայցս ունիմք մեզ Սրբազան Վրուխ մը՝ Սէ հափառ Հայրապետ մը՝ ամենայն Հայոց իրաւորիկոս մը, որոյ իրաւասութեան ներքոյ միայն կը գտնուինք ՚ի հոգևորս թողում ասել թէ () սմանեան հողի վըրայ գտնուողներս ունիմք նաև Ս. Պօլսոյ Ս. Պատրիարք մը. ուրեմն մեզ անդամաց որոշ որոշ հռօմէն ճանաչումը առանց մեր Ս. Վրխոյ ճանաչման՝ մեզի պատիւ չբերելէն զատ, մեր ս. Վկեղեցւոյ մէջ ունեցած՝ դասակարգութեանցս ալ ուրիշ կերպարանք մը կուտայ, զոր կը պատկառիմ ասել։ Ուստի քանի որ իմ Սրբազան Վրուխէն՝ այն է Սուրբ Լքմիածնայ Սէ հափառ և Սրբաղնասուրբ Հայրապետէն չունիմ հրաւեր և հրաման մը, որ ՚ի Վորին Սէ հափառութենէ միայն կըլլան մեզ Հայաստանեայցս Վկեղեցւոյ պաշտօնեից ամենայն հրաւերք և հրամանք ՚ի պաշտօնե ուղղակի, և կամ Վորին Սէ հափառութեան հրամանաւ ՚ի Սրբազան պատրիարգէն Ս. Պօլսոյ. և քանի որ Չեր Վերապայծառութենէն եկածը այսպէս չէր, բնական էր որ ընդունելութիւն չէր կրնար գտնուել

մեզմէ, զորս ծանուցանել պարտք ինձ համարելով։ Ս'նամ Չերումը Վերապայծառութեան բարեացակամ։
 18 փետ. 1869 Գ. Վ. Առաջ, վիճակից Առաջնորդարան Հայոց Կարուց ի կ'որս։

ՊԱՏՃԷՆ ՀՐԱՒԻՐԱԳՐԻ

Սրբազան Տեառն Պիոսի Թ. նախախնամութեամբն Ասուծոյ Քահանայապետի Առաքելական բուղբը առ ամենայն Եպիսկոպոսունս Արեւելածես Եկեղեցեաց որք Առաքելապետական Արոտոյն ձեռնադրակցութիւն թուին։

Մրեւելածէս Վկեղեցիներուն ամեն Վպիսկոպոսաց որք Մուսքելապետական Մթոռոյն հետ չունին հաղորդակցուի։ Պիոս Թ. Վահանայապետ։

Մտուածային Վախախնամութեան ծածուկ խորհրդովը առանց մեր կողմնէ արդիւնք մը ունենալու, ելլելով այս բարձր Մթոռը ժառանգ երանելի Մուսքելապետին, որնոր Մտուածմէ իրեն տրուած առանձնաշնորհութեանը համեմատ՝ հաստատուն և անսասանելի վէմն է, որուն վրայ Վրխստոս իր եկեղեցին շինեց (սուրբ Վրիգոր Վիւսացի. բ. ներքող նախավկային. ՚ի Վալլանդ. զ. 500)։ Ս'եր վրայ դրուած բեռը կը ստիպէ զմեզ, որ աշխրբիս ամեն կողմնեղած քրիստոնէից վրայ մեր խնամքը տարածենք ու բոլորով սրտիւ բաղձանք ու ջանանք զամենքն ալ յորդորել ՚ի գրկախառնութիւն հայրենի սիրոյ։ () ենք